ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021թ. N 435-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի, Քաղաքաշինության մասին օրենքի 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի 138-րդ, 139-րդ կետերի և հիմք ընդունելով Սերգեյ Սամվելի Սարգսյանի և Գոհար Վոլոդյայի Սարգսյանի համատեղ դիմումը՝ որոշում եմ.

1.Սերգեյ Սամվելի Սարգսյանին և Գոհար Վոլոդյայի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 27/98 (ծածկագիր՝ 07-003-0037-0138, վկայական N13052013-07-0063) հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության կառուցված ավտոտեխսպասարկման կայանի համար տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2.Սերգեյ Սամվելի Սարգսյանին և Գոհար Վոլոդյայի Սարգսյանին՝ համայնքապետարանի 900105202163 հաշվեհամարին վճարել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության ձևակերպման համար:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Do Not Remove Signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք. Թյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021թ. N 436-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԾԱԾԿԵՐՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով, որ բնակելի տունն ու պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, բնակելի տունը, ջրավազանը, ծածկերն ու պարիսպը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի սեպտեմբերի 23-ին տված N Աբ-1837 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Ռուբիկ Աշոտի Մանուկյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Նուռնուսի թիվ 3 տեղամասի թիվ 274 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1-ին փողոց 274:

2. Ռուբիկ Աշոտի Մանուկյանին (ծնված՝ 1945 թվականի հունվարի 06-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1-ին փողոց 274 հասցեի (ծածկագիր՝ 07-051-0101-0070) 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 206.4 քմ արտաքին (175.15 քմ ներքին) մակերեսով բնակելի տունը, ջրավազանը, ծածկերն ու պարիսպը ճանաչել օրինական:

3.Ռուբիկ Աշոտի Մանուկյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել ընդհանուր 14333,76 (տասնչորս հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) դրամ՝ ընդհանուր 16.8 քմ արտաքին մակերեսով ջրավազանի ու ծածկերի օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «Գիս-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված հատակագիծը:

6.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

18.10.2021

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 . Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021թ. N 437-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Արթուր Ռազմիկի Ստեփանյանի, Արտակ Պողոսի Հակոբյանի և Մերուժան Մաքսիմի Սիմոնյանի համատեղ դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական զանգված 19-րդ թաղամաս 11 (ծածկագիր՝ 07-051-0139-0014, վկայական N 26042021-07-0030), գյուղ Նուռնուս Այգետարածք 20-րդ թաղամաս 16 (ծածկագիր՝ 07-051-0138-0024, վկայական N 13052021-07-0144), գյուղ Նուռնուս 19-րդ թաղամաս 15 (ծածկագիր՝ 07-051-0139-0015, վկայական N 04082021-07-0153) հասցեների անշարժ գույքերի ջրամատակարարման արդիականացման աշխատանքների կատարման (կառուցման) նպատակով Արթուր Ռազմիկի Ստեփանյանին, Արտակ Պողոսի Հակոբյանին և Մերուժան Մաքսիմի Սիմոնյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021թ. N 438-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 16 ՇԵՆՔ 13 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Լուսիկ Գուրգենի Ազիզյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 16 շենք 13 բնակարանի (վկայական 0167694, տրված՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 16 շենք 13 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021թ. N 439-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանի զեկուցագիրը՝ *որոշում եմ.*

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող հանձնաժողով ստեղծելու մասին» N 65-Ա որոշման 1-ին կետում «Արման Շառյան» բառերը փոխարինել «Վրեժ Բեգլարյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Left Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021թ. N 440-Ա

«ԼԻԱՆԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԱԶԱՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.«Լիանա Ղուկասյան Ազատի» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ՝ 82664882) ենթարկել վարչական պատասխանատվության՝ Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնք, Բյուրեղավան քաղաք, Երիտասարդական փողոց 23 շենքի մոտ հասցեում գտնվող առևտրի օբյեկտում 2021 թվական հունվարի 01-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 27-ը առանց թույլտվության ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառք իրականացրելու համար:

2.«Լիանա Ղուկասյան Ազատի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ Լիանա Ազատի Ղուկասյանի կողմից տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202106 հաշվեհամարին:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման մասին Լիանա Ազատի Ղուկասյանին սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

☐ Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021թ. N 441-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշմամբ հաստատված կարգը և սոցիալական աջակցության հանձնաժողովի առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1.Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների իրականացման նպատակով համայնքի 2021 թվականի բյուջեից տրամադրել 280000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ՝ Բյուրեղավան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու համար՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2021թ. N 442-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ ու 51-րդ կետերի և հիմք ընդունելով Սմբատ Բաղալյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Սմբատ Բաղալյանին պատկանող անշարժ գույքին (վկայական՝ 1463729, տրված 2005 թվականի մարտի 23-ին) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 5/58:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2021թ. N 443-Ա

«ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՄՅՈՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հիմք ընդունելով Գայանե Գրիգորյանի հայտը և վճարման անդորրագիրը՝ *որոշում եմ*

1.«Գայանե Գրիգորյան Սեմյոնի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 35158542) տալ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 11/37 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում՝ 2021 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 21
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2021թ. N 444-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 48-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ին հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 22-ի N 15/21 արձանագրությունը՝ *որոշում եմ.*

1.2021 թվականի համար «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայության դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ Մոնիկա Արամի Առաքելյանի (ծնված 2013 թվականի հոկտեմբերի 8-ին) համար կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ սկսած 2021 թվականի նոյմբերի 1-ից:

2.«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1)ապահովել կիրառված արտոնության կատարումը.

2)արտոնությունից օգտվողի կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 22
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
(ՀՀ մարզը, համայնքը)

ԱԿՍՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N10 18 հոկտեմբերի 2021 թ.

Կառուցապատող Սերգեյ Սամվելի Սարգսյան, Գոհար Վոլոդյայի Սարգսյան (ք. Բյուրեղավան 32շ.40բն.), հեռ.094606967 կողմից
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Կառուցված 1(մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության ավտոտեխսպասարկման կայանը,
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 27/98 հասցեի (ծածկագիր՝ 07-003-0037-0138, վկայական N13052013-07-0063) հասարակական կառուցապատման հողամաս հասցեում՝
(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ», սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (արտոնագիր ՃԲԴ –Ա-085, ԿԵԴ-Ա2-007) կողմից.
(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2. շինարարությունն սկսվել է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

տրված 30.09.2020 թ. N 19 շինարարության թույլտվությունների համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է <<Լիանի Վարդ>> ՍՊԸ-ի (լիցենզիա 15960) կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)

առկա է շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության ավտոտեխսպասարկման կայան

5. հատուկ պայմանները ավտոտեխսպասարկման կայանը կառուցված է ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը 14_10_ 2021 թ.
2) ընդունող հանձնաժողովի ակտը 08. 10. 2021թ. N13
3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 35 թերթ, որից 3 թերթը տեխնիկական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար

(ստորագրությունը) Հ. ԲԱԼԱՍՅԱՆ
(անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզը, համայնքը)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 28-2

18. հոկտեմբերի . 2021 թ.

Տրված է կառուցապատող Արթուր Ռազմիկի Ստեփանյան (ք. Երևան Նոր Նորք 7-րդ զանգված 35շ. 23բն.), Արտակ Պողոսի Հակոբյան (ք. Երևան Չեխովի 33շ. 26բն.) , Մերուժան Մաքսիմի Սիմոնյան (ք. Երևան Ավան Առինջ 2/11շ. 32բն.) հեռ.094318080, 077-79-40-11,091208626 -ին՝
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական զանգված 19-րդ թաղամաս 11 (ծածկագիր՝ 07-051-0139-0014, վկայական N26042021-07-0030), գյուղ Նուռնուս Այգետարածք 20-րդ թաղամաս 16 (ծածկագիր՝ 07-051-0138-0024, վկայական N13052021-07-0144), գյուղ Նուռնուս 19-րդ թաղամաս 15 (ծածկագիր՝ 07-051-0139-0015, վկայական N04082021-07-0153) հասցեների անշարժ գույքերի
վկայականի համարը, գտնվելու վայրը, հողամասի գտնվելու վայրը)

_____օբյեկտի
(օբյեկտի անվանումը, հասկիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

ջրամատակարարման աշխատանքների արդիականացման (կառուցման)(արդիականացման)

աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են Աշխատանքային նախագիծ
(նախագծային փաստաթղթերի փուլը,

«ՍՄ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ-ի լիցենզիա N17944 , տնօրեն՝ Մ. Ավագյան կողմից:
նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 50 հիթսուն օրվա ընթացքում:
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. Բալասյան
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ. Դ. Դանիելյան

Հավելված
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 20-ի № 441-Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

ՀՀ	Ազգանուն, անուն, հայրանուն	Հասցեն	Գումարի չափը (դրամ)
1.	Հարությունյան Կարո Արամի	ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 4 - րդ հանրակացարան 62 բնակարան	30 000
2.	Պատվականյան Ռուզաննա Վալերիի	ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 4 - րդ հանրակացարան 76 բնակարան	15 000
3.	Նավիցկայտե Գալինա Անտանոյի	ք. Բյուրեղավան 2-րդ փողոց 1-ին հանրակացարան 47 բնակարան	10 000
4.	Բալյան Մանուշակ Կիմիկի	ք. Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 20 շենք 7 բնակարան	15 000
5.	Բաղիկյան Ալվարդ Գրիգորիի	ք. Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 26 շենք 22 բնակարան	50 000
6.	Մարտիրոսյան Գևորգ Էդիկի	ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 78 բնակարան	30 000
7.	Սարիբեկյան Լալա Ավետիքի	ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 63 բնակարան	15 000
8.	Իսրայելյան Փերի Ռաֆենի	ք. Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 4 շենք 41 բնակարան	15 000
9.	Մուրադյան Ալվարդ Վազգենի	ք. Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 31 շենք 20 բնակարան	20 000

10.	Դանիելյան Յուրի Սերգեյի	ք. Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 39 շենք 17 բնակարան	10 000
11.	Ղավալյան Նաիրա Վարկեսի	ք. Բյուրեղավան Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 97 բնակարան	15 000
12.	Վարդանա Ռեգինա Բենյամինովայի	ք. Բյուրեղավան 1-ին փողոց 2 շենք 18 բնակարան	15 000
13.	Հակոբջանովա Դիանա Արկադիի	ք. Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 47 շենք 5 բնակարան	10 000
14.	Սարգսյան Մարինա Գարրիի	ք. Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 41 շենք 10 բնակարան	30 000
Ընդամենը			280 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ